

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ  
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Հրաչյա Արսենի Դանիելյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԵՎ ԿՐԻՊՏՈՒՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.03. - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի հյուսիսային համալսարանում:**

**Գիտական ղեկավար՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Արմեն Գևորգի Ճուղուրյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Մաթևոսյան Աշոտ Վարազդատի**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Աղաբեկյան Էդգար Վահագնի**

**Առաջարար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. սեպտեմբերի 8-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. մայիսի 30-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Տ. Մարտիրոսյան**



## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### ***Թեմայի արդիականությունը***

Տնտեսավարման արդի փուլում, երբ թվայնացված տնտեսությունն առավել արագ տեմպերով է իրեն դրսևորում, ինչպես տեսության մեջ, այնպես էլ գործնականում հատկապես արդիական են դառնում էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման բարելավմանն ուղղված հիմնախնդիրների լուծումները:

Թվային միջավայրում էլեկտրոնային գործարքների ֆինանսական կառավարումը առնչվում է ինչպես Կենտրոնական բանկի կողմից մշակված կանոնակարգերի բավարարման, այնպես էլ ֆինանսական կազմակերպությունների գործարար շահերի սպասարկման գործընթացներին: Մի կողմից, պետությունը ձգտում է հնարավորինս կառավարելի դարձնել էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության համակարգային ռիսկերը, մյուս կողմից, առևտրային բանկերն ու մասնագիտացված ֆինանսական կազմակերպությունները փորձում են մրցակցային դարձնել իրենց կողմից իրականացվող վճարահաշվարկային գործարքները, և դիմում են ինովացիոն վճարային գործիքների, որոնք ֆինանսական կառավարման առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում:

Ներկայումս կարևորվում է էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների արդյունավետության գնահատումը՝ հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարման աստիճանի վրա: Առավել ևս արդիական է համարվում այդ ուղղությամբ հաշվետվողականության ապահովումը: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունը նպատակաուղղվում է առավելապես ֆինանսական կառավարման վերահսկողական գործառույթներին, և բնավ չի ներկայացնում ոլորտի մրցակցային միջավայրը:

Վիրտուալ միջավայրում վճարահաշվարկային գործարքների իրականացումը ձևավորում է առանձնահատուկ ռիսկեր, կապված ոչ միայն կիրեռանվտանգության ապահովման, այլև գործարքների ֆինանսական կառավարման հետ: Հատկապես, ներկայումս կարևորվում են քարտային ծառայությունների ծածկույթի, վճարային գործարքների ֆինանսական պաշարների ապահովվածության, ֆինանսական կազմակերպությունների կապիտալի համարժեքության ռիսկերը, որոնք կառավարման առանձնահատուկ մոտեցումներ են պահանջում և դրանց գծով իրականացվում են օպերատիվ կառավարչական որոշումներ:

Վերջին տասնամյակում, կենտրոնացված կարգով էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությանը զուգահեռ, ֆինանսական շուկայում

ակտիվ գործունեություն են ծավալում կրիպտոարժույթները, որոնք կառավարվում են բլոքչեյն համակարգում ապակենտրոնացված սկզբունքով: Աստիճանաբար ձևավորվում է մի իրավիճակ, երբ կրիպտոարժույթների էմիսիան և շրջանառության ծավալումը իրենց ազդեցությունն են թողնում կենտրոնական բանկի կողմից իրականացվող էլեկտրոնային փողի զանգվածի փոփոխությունների վրա: Այս առումով, արդիական է համարվում նաև կրիպտոարժույթների շրջանառության ֆինանսական կառավարման բարելավման ուղիների ներկայացումը:

Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման տեսամեթոդաբանական հիմնախնդիրների քննարկումներն իրենց մեկնաբանություններն են ստացել ինչպես հայազգի, այնպես էլ արտասահմանցի հեղինակների կողմից (Բոստանջյան Վ., Գասպարյան Լ., Կիրակոսյան Գ., Մոմջյան Մ, Տեփոյան Ա., Բեհնուդ Ս., Կովալեվա Յու., Մալեշենկո Ս., Սորոկինա Ա. և այլոք): Սակայն, տվյալ որոտի բարելավմանն ուղղված վերոնշյալ հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել էլեկտրոնային վճարահաշվարկային կառավարման համակարգում, ինչն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

### ***Շեղազուտության նպատակը և խնդիրները***

Ատենախոսության նպատակն է մշակել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի ֆինանսական կառավարման մոտեցումների բարելավման գիտական ուղղություններ:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթները և զարգացման միտումները ոչ միայն ազգային, այլև միջազգային հարթություններում,
- ներկայացնել վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումներ, որոնք ձևավորվում են ոլորտի շահառուների սպասումներով,
- մշակել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք հիմնված կլինեն ռիսկերի բազմագործոնային չափման միասնական համակարգի վրա,
- վերլուծել կրիպտոարժույթների շրջանառության և պետական վերահսկողության շրջանակներում գտնվող էլեկտրոնային փողերի թողարկման գործընթացների փոխազդեցության շրջանակը,

- ներկայացնել առաջարկություններ փողի զանգվածի որոշման բարելավումների ուղղությամբ, որոնք հաշվի կառնեն կրիպտոարժույթների ապակենտրոնացված շրջանառությունը,
- առաջարկել տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցումներ, հաշվի առնելով փողի զանգվածում կրիպտոարժեքների ընդունելի ցուցիչներ և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության ուղիներ:

***Հետազոտության օբյեկտը և առարկան***

Հետազոտության օբյեկտ է հանդիսացել ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգը, ինչպես նաև կրիպտոարժույթի շուկան, իրենց ֆինանսական գործառույթների շրջանակով: Հետազոտության առարկան ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի ֆինանսական կառավարման գործընթացն է՝ իր վերահսկողության և արդյունավետության հաշվետվողականության շրջանակով:

***Հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը***

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի կառավարման բարելավման գծով առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես.

- մշակվել է էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի գնահատման մոտեցում՝ կիրառելով ռիսկային գործոնների չափելիության միասնական համակարգ և շահառուների նպատակադրումներից հավանական կորուստների որոշման համապարփակ ցուցանիշներ,
- էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթների և զարգացման միտումների ուսումնասիրության հիման վրա առաջարկվել է վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցում՝ հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարվածության աստիճանի վրա,
- ֆինանսական շուկայում կրիպտոարժույթի շրջանառության վերլուծությունների հիման վրա առաջարկվել է տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցում՝ ընդլայնելով փողի զանգվածի բնութագրման որակական ցուցիչները,
- էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների արդյունքների գնահատումներով առաջարկվել է էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության վարկանիշավորման համակարգ, վերահսկողության նպատակով վճարահաշվար-

կային գործունեության հաշվետվողականությունն օգտագործելով նաև որպես մոտիվացիոն գործիք:

### ***Հեղազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը***

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների շրջանառության ֆինանսական կառավարման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգում վերահսկողական նպատակադրումների և կազմակերպչական գործառույթների բարելավմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգում՝ նպաստելով առևտրային բանկերի վճարային գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը և նրանց կողմից իրականացվող կառավարչական որոշումների ընդունման գործընթացի բարելավմանը:

### ***Հեղազոտության փորձարկումը և հրապարակումները***

Հետազոտության գիտական արդյունքների շուրջ իրականացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ տնտեսագետ տեսաբանների, ՀՀ ԿԲ ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության «Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողովում (2021 թ.): Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի կողմից հրատարակած գիտական 6 հոդվածներում:

### ***Արենախոսության կառուցածքը և ծավալը***

Ատենախոսությունը շարադրված է 116 էջի վրա՝ առանց հավելվածների, և բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածներից:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորոյթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին «**Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի էվոլյուցիան և արդի մարդահրավերները**» գլխում քննարկվում են էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությունը և կառուցվածքային առանձնահատկությունները:

Վճարային գործիքակազմի էվոլյուցիան փողի վերափոխումների և դրանց նյութական ու ոչ նյութական կրիչների, ինչպես նաև վճարահաշվարկային միջավայրի փոխակերպումների հետ է պայմանավորված: Այս համախմբում առանցքային է համարվում ոչ թե կրիչը, որը ներկայանում է որպես վճարման գործիքի ձև, այլ վճարահաշվարկային միջավայրը, որը վճարային գործիքների բովանդակային մասն է ապահովվում: Այս առումով էլեկտրոնային վճարային գործիքների էվոլյուցիան սերտ առնչություն ունի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և վճարային միջավայրի վիրտուալիզացիայի հետ:

Հայաստանի Հանրապետություն էլեկտրոնային փողերի թողարկման և էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի պաշտոնական կարգավորումները թերևս նախաձեռնվեցին 2000-ականների սկզբին, երբ ընդունվեցին ոլորտին առնչվող օրենքներ և ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգեր, որոնք սկսեցին ակտիվ գործնական կիրառություն ստանալ: Վիճակագրությունը ցույց տվեց, որ վերջին տարիներին ՀՀ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերը կայունություն են դրսևորում (տե՛ս աղյուսակ 1):

Էլեկտրոնային փողերի էվոլյուցիան ներկայացվում է չորս փուլով, երբ դրամի արձանագրման ավանդական կրիչներին զուգահեռ հանդես եկան էլեկտրոնային կրիչներ (I փուլ), այնուհետև դրամին համարժեք միավորները սկսեցին թողարկվել ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական կառույցները (II փուլ): Էլեկտրոնային փողերի էվոլյուցիոն երրորդ փուլը համարվեց անանուն վճարային գործարքների իրականացումը: Եվ վերջապես, մեր օրերում էլեկտրոնային փողերի թողարկման և շրջանառության առանձնահատկությունը կայանում է կրիպտոարժույթների ի հայտ գալով (IV փուլ), որոնց զծով դեռևս չեն իրականացվում պետական լիարժեք կարգավորումներ:

Վճարահաշվարկային գործարքների դինամիկան ՀՀ-ում<sup>1</sup>

<b>Ցուցանիշներ</b>	<b>2018</b>	<b>2019</b>	<b>2020</b>	<b>2021</b>
Էլեկտրոնային վճարային հանձնարարականներով				
Ծավալ (մլն դրամ)	7,293,486	31,153,014	7,429,830	7,116,782
Քանակ	5,343,607	22,517,189	6,315,388	6,667,975
Չեկերով				
Ծավալ (մլն դրամ)	969	3,348	1,364	1,224
Քանակ	428	1,650	198	157
Քարտերով անկանխիկ գործառնություններ				
Ծավալ (մլն դրամ)	139,004	602,022	176,585	174,350
Քանակ	7,267,540	31,146,085	10,369,33	10,552,023

Ատենախոսության երկրորդ **«Կրիպտոարժույթների շուկայի ֆինանսական կառավարման հիմնախնդիրները»** գլխում վերլուծվում է կրիպտոարժույթների թողարկման և շրջանառության կարգավորման հիմնախնդիրների շրջանակը:

Կրիպտոարժույթները ձևավորվեցին թվային տնտեսության, էլեկտրոնային գաղտնագրության և օգտատերերի պահանջմունքների փոփոխության հատույթում: Եվ դա է պատճառը, որ կրիպտոարժույթների կիրառման կարգավորումներն ապակենտրոնացվեցին և մեկնարկեցին ոչ թե վերևից՝ պետության կողմից, այլև ներքևից՝ կրիպտոանձերի համայնքի կողմից:

Առաջարկվող «փողի համախառն զանգված» կատեգորիան (MC) իր մեջ ներառում է կենտրոնական բանկի կողմից ընդունված փողի զանգվածի ազդեցատները M, ինչպես նաև հավելագրված կենտրոնական բանկի ռեեստրի կողմից գնահատված կրիպտոարժույթի շրջանառությունը՝ շուկայական արժեքով (CA):

Եթե կենտրոնական բանկը ընդունի և իր ռեեստրում գնահատի կրիպտոարժույթի շրջանառությունը, ապա փողի զանգվածի և ապրանքաշրջանառության ու ծառայությունների արժեքի համարժեքության բանաձևը կընդունի հետևյալ տեսքը՝  $(M + CA) = P \times T$ , որտեղ.

P և T – համապատասխանաբար գների և ապրանքային գործարքների ու ծառայությունների մատուցման ծավալներ

<sup>1</sup> ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, [www.cba.am](http://www.cba.am)



Ընդհանուր առմամբ, կրիպտոարժույթների «ինտերվենցիան» ավանդական փողերի շրջանառության ոլորտ պետք է սահմանափակ լինի, քանի որ կրիպտոանձերի կողմից այդ արժույթի «ներքևից» ապակենտրոնացված կառավարումը կրում է բազում ռիսկեր, որոնք զանգվածային ներթափանցումը կենտրոնացված կառավարվող փողի զանգված, կարող է առաջացնել դրամավարկային էկոհամակարգի խաթարման ռիսկեր՝ կրիպտոարժույթների գնային կտրուկ տատանումների, կիբեռանվտանգության խաթարումների, անկառավարելի մայնինգի պատճառներով, ուստի առաջարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանել փողի զանգվածի թույլատրելի կրիպտոլիզացիայի աստիճան (Z), և դրանով իսկ սահմանափակումների գործիքակազմ կիրառել  $(CA/MC) \times 100 = Z$  մոտեցմամբ:

Հետևաբար, կրիպտոարժեքի ֆինանսական կառավարման պարագայում, հնարավոր կդառնա միմյանց հակակաշռելու կենտրոնական բանկի կողմից փողի զանգվածի և կրիպտոարժեքների շրջանառության վերահսկողության մոտեցումները, կիրառելով հավասարումների հետևյալ համակարգը.


$$\begin{cases} CA/(M+CA) = Z \\ M + CA = P \times T \end{cases}$$

Կրիպտոարժույթների ֆինանսական կառավարումը, այս պարագայում արդեն իսկ կարող է տալ իր շոշափելի արդյունքները, քանի որ գործողության մեջ են դրվում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են կենտրոնական բանկի կողմից վերահսկվող շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածը, միավոր փողի շրջապտույտի արագությունը, ապրանքների գների և մատուցվող ծառայությունների արժեքային ծավալները: Եվ եթե վերոնշյալ համակարգում կենտրոնական բանկի կողմից սահմանվող փողի զանգվածը և երկրի ներսում շրջանառվող կրիպտոարժույթների ծավալները հանդես գան անհայտներով, ապա մնացած հաստատված պարամետրերի պարագայում այդ երկու ցուցանիշների միջև կստեղծվի վերահսկելի փոխկապացվածություն:

Ատենախոսության երրորդ «**Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման հայեցակարգային մոտեցումները**» գլխում քննարկվում են ռիսկերի կառավարման հիմնախնդիրները էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքներում:

Չնայած այն հանգամանքին, որ մասնագիտական գրականությունում էլեկտրոնային վճարային գործարքների և էլեկտրոնային փողերի կիրառման ռիսկերը ներկայացվում են իրենց բազմազանությամբ, այնուհանդերձ դրանք խմբավորվում են: Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային վճարահաշվարկային գործարքների ռիսկերը առաջարկվում է խմբավորել չորս ուղղություններով,

ինչպիսիք են ֆինանսականը, գործառնականը, կիրեռանվտանգությունը և համակարգայինը, որոնք շղթայապես փոխկապակցված են և ներազդում են միմյանց վրա (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության ռիսկերի դասակարգումը<sup>2</sup>


Հաշվի առնելով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեությանն առնչվող ռիսկերը, առաջարկվում է ռիսկերի բազմագործոնային գնահատման մոտեցում՝ հիմնված նպատակադրումների և դրանցից բխող բացասական շեղումների վրա: Այս դեպքում իրականացվում են հետևյալ քայլերը.

- ներկայացվում են վճարահաշվարկային գործունեության կայունությունը ապահովող նպատակադրումներ՝ յուրաքանչյուրի գծով սահմանելով չափայնության թույլատրելի շեմ,
- գործունեության փաստացի արդյունքները համադրվում են դրանց գծով սահմանված նպատակադրումների հետ, և ստացված շեղումները արտահայտվում են հարաբերական մեծություններով՝ գործակիցներով,

<sup>2</sup> Գծապատկերը կազմվել է ատենախոսի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա:

- ռիսկի աստիճանի համալիր մոտեցմամբ գնահատման նկատառումով հաշվարկվում է բոլոր գործոնների գծով գործակցային համախմբված շեղումը,
- որքան ստացված գործակիցները հեռանում են 1,0-ից, այնքան դրանց գծով ներկայացվող վճարահաշվարկային գործառույթները համարվում են ռիսկային:

Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության տեղեկատվությունն օգտագործող շահառուների շրջանակը ներկայացված է գծապատկեր 2-ում: Եթե Կենտրոնական բանկն առավելապես շահագրգիռ է համակարգային ռիսկերի կանխարգելման, ֆինանսական կայունության տեղեկատվական հոսքերին տիրապետմանը, ապա վճարային գործարքներում ընդգրկված սուբյեկտներին հետաքրքրում են գործընկերային պարտավորություններն ու դրանց կատարման ընթացքը: Մյուս կողմից, վճարային գործարքների վերջնական սպառողները շահախնդիր են ոչ միայն իրենց մատուցվող ծառայությունների որակին առնչվող հաշվետվողականության ձևավորմանը, այլև վճարահաշվարկային ծառայություններ իրականացնող սուբյեկտների գծով հետադարձ կապի ապահովմանը, որպեսզի հաշվի առնվեն իրենց առաջարկները համակարգի գործունեության բարելավումների ուղղությամբ:




Գծապատկեր 2 Էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների տեղեկատվության շահառուների շրջանակը<sup>3</sup>

<sup>3</sup> Գծապատկերը կազմվել է ատենախոսի ուսումնասիրությունների հիմքով:

« Կենտրոնական բանկը, իր գործունեության թափանցիկությունն ապահովելու և հանրությանը իրազեկ պահելու նպատակով որոշակի պարբերականությամբ հրապարակում է վերահսկողության գծով իր կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Տեղեկատվության մեջ ամփոփ ներկայացվում են համակարգերի գործունեության փաստացի գնահատման արդյունքները և « Կենտրոնական բանկի կողմից այս բնագավառում իրականացվող աշխատանքները:<sup>4</sup> Սակայն, անգամ այս պարագայում, լիարժեքորեն չեն ապահովվում հաշվետվողականության սկզբունքները, որոնցից առանցքայինը տեղակատվությունն օգտագործողների միջև հետադարձ կապի ապահովումն է:

« Ետադարձ կապով շահառուներից էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների արդյունքների գնահատման հիման վրա առաջարկվում է կազմել վարկանիշային աղյուսակներ, որոնք կլրացնեն Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվետվությունները և մաս կկազմեն հաշվետվողական գործընթացի: Կարևորվում է, թե ինչպես է արձագանքում մրցակցային շուկան վճարահաշվարկային գործունեություն ծավալող կազմակերպությունների աշխատանքի որակին, որը բնավ չի արտացոլվում « Կենտրոնական բանկի կողմից հրատարակված հաշվետվություններում:



Գծապատկեր 3. Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման բարելավման ոլորտներ<sup>5</sup>

<sup>4</sup> « Կենտրոնական բանկի պաշտոնական կայք, [www.cba.am](http://www.cba.am)

<sup>5</sup> Գծապատկերը կազմվել է ատենախոսի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա:

Ընդհանրացնելով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման բարելավման մեր կողմից առաջարկվող ուղիները (տե՛ս գծապատկեր 3.)՝ հարկ ենք համարում դրանք կառուցելու երեք հիմնասյունով, որոնցից առաջինը ֆինանսական վերահսկողությունն է ինչպես միկրո, այնպես էլ մակրոնարդակներով: Եթե միկրոնակարգակում իրականացվող կառավարչական վերահսկողությունը ուղղորդվում է ֆինանսահաշվարկային կազմակերպությունների և առևտրային բանկերի իրացվելիության և կապիտալի համարժեքության կարգավորումներին, ապա մակրոնակարգակով կարգավորումներն առնչվում են էլեկտրոնային փողերի էմիսիային, փողի զանգվածի և շրջանառվող կրիպտոարժույթների փոխառնչություններին:

Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման բարելավումների երկրորդ հիմնասյուն է համարում համակարգային և գործառնական ռիսկերի կանխարգելումը և զսպումը: Ի վերջո, ֆինանսական կառավարման ոլորտի բարելավումների երրորդ հիմնասյուն է դիտարկում հաշվետվողականությունը, որտեղ գործելու են ոչ միայն վերահսկողության և մոնիտորինգի շարժառիթները, այլև էլեկտրոնային վճարահաշվարկային գործառույթների արդյունավետության բարձրացման շահադրդման մոտեցումները:

**Եզրակացություններ** բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները:

1. Ի տարբերություն ավանդական վճարահաշվարկային համակարգերի, էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության առանձնահատկություններն են հանդիսանում վճարային գործիքների բազմազանությունը, վճարային միջավայրի վիրտուալիզացիան, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դոմինանտությունը: Ընդ որում, էլեկտրոնային փողերի էվոյուցիոն փուլերի վերլուծությունները թույլ են տալիս կատարելու մի շարք եզրահանգումներ:

Առաջին, էլեկտրոնային փողի ձևավորման էվոյուցիայի հետ մեկտեղ վերանայվում են փողի ֆունկցիաները: Այստեղ առաջնահերթ է դառնում փողի վճարամիջոց ֆունկցիան, քանի որ էլեկտրոնային փողերը գրեթե չեն կատարում կուտակման գործառույթ: Ավելին, հիմնականում հանդես գալով որպես վճարամիջոց, էլեկտրոնային փողերը անուղղակի դերակատարում են ունենում արժեքի չափման գործառույթում: Հանդիսանալով որպես վիրտուալ չափման միավոր, էլեկտրոնային փողերը հիմնականում ներկայանում են որպես նրանց հետևում ընկած իրական փողերի փոխակերպումներ, դրանով իսկ կորցնելով արժեքի չափման գործառույթը, ուստի, էլեկտրոնային փողերի ձևավորման էվոյուցիայի հիման վրա կարելի է պնդել, որ ներկայումս դրսևորվում է

վիրտուալ փողի ածանցված՝ փոխարժեքի ներկայացման գործառույթը: Եվ հենց այդ նոր՝ փոխարժեքի ներկայացման գործառույթը, հետին պլան է մղում «համաշխարհային փող» ֆունկցիան, քանի որ էլեկտրոնային փողը միջազգային շուկաներում ինքնին արժույթային փոխակերպման է ենթարկվում և հանդես է գալիս պահանջվող փոխարժեքով:

Երկրորդ, փողի թվայնացման էվոյուցիան հանգեցրեց նրան, որ դրամի էմիսիայի և շրջանառության պետական կարգավորումներին զուգահեռ սկսեցին թողարկվել պետական կարգավորիչ համակարգերից դուրս էլեկտրոնային փողեր: Այսօր արդեն իրականություն է դառնում ոչ պաշտոնական էլեկտրոնային փողերի էմիսիան և շրջանառությունը, որը հիմնախնդիրներ է առաջացնում պետական մակարդակով էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության ֆինանսական կառավարման գծով:

Երրորդ, էլեկտրոնային փողի ձևավորման էվոյուցիայի հետ մեկտեղ ակտիվանում են բազմաբնույթ թվայնացված վճարամիջոցները և ընդլայնվում դրանց սպասարկող ենթակառուցվածքները: Թվայնացվող վճարահաշվարկային գործառույթները վերանայում են անկախիկ շրջանառության ավանդական սկզբունքներն ու մոտեցումները, որոնք որակական փոխակերպումների են ենթարկվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջավայրում:

2. Կրիպտոարժույթի կարգավորման գործընթացը պետք է դուրս գա մեկ պետության շրջանակից և միջազգային տեղեկատվական շղթա հանդիսանա՝ կորրդինացնելով տարբեր երկրների ջանքերը կիբեռանվտանգության, հարկազանձման, փողերի լվացման ռիսկերի կանխարգելման, և ի վերջո, փողի բազայի կարգավորման ուղղությամբ: Այս առումով, առաջարկվում է ձևավորել կրիպտոարժույթի կարգավորման ոչ թե լրկալ, այլ միջպետական օրենսդրական դաշտ՝ ուղղված կրիպտոարժույթի օգտագործման ֆինանսատնտեսական ռիսկերի կանխարգելման գործառույթների ներդաշնակեցմանը: Այն ոչ միայն միջազգային օրենսդրական կարգավորման հարթակ կստեղծի կրիպտոակտիվների կենտրոնացված վերահսկողության առումով, այլև կհամախմբի տարբեր երկրների պետականամետ գործունեությունը ֆինանսական ակտիվների օգտագործման կարգավորիչների կիրառմանը մի շարք կարևորագույն ուղղություններով:

Առաջին. կրիպտոարժեքների ապակենտրոնացված գործառույթների մի որոշակի հատված կհայտնվի նաև պետական կենտրոնացված կարգավորումների ներքո:

Երկրորդ, կարգավորիչ օրենսդրական դաշտի ներթափանցումը կրիպտոշրջանառության ոլորտ որոշակիորեն երաշխիք կհանդիսանա կրիպտոմիջավայրի անվտանգ և կայուն գործունեության համար:

Երրորդ, կարգավորման դաշտում պետության և կրիպտոհամայնքի համագործակցությունը նպաստավոր պայմաններ կձևավորի կրիպտոակտիվների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

3. Առաջարկվել են կրիպտոարժույթների շրջանառության և փողի զանգվածի ձևավորման փոխառնչության կառավարման մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս.

- ճշգրտումներ մտցնելու կենտրոնական բանկի կողմից սահմանվող փողի զանգվածի վրա՝ հաշվի առնելով վերջինիս ձևավորման գործընթացին կրիպտոարժույթների շրջանառելիության ներազդեցությունը,
- բլոքչեյնում կրիպտոանձերի կողմից կրիպտոարժույթների շրջանառության ապակենտրոնացված կառավարման տեղեկատվական որոշ բաղադրիչներ տեղափոխել կենտրոնացված կառավարման հարթություն, նպատակ ունենալով զսպելու կրիպտոակտիվների օգտագործման հետ կապված ֆինանսական ռիսկերը,
- համակարգային գնահատումների միջավայր ստեղծելու կրիպտոարժույթների էկոհամակարգի բաղադրիչների գործունեության և կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային վճարահաշվարկային գործառույթների փոխազդեցությունների ոլորտում՝ դրանով իսկ լուծելով կրիպտոակտիվների օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներ:

4. Առաջարկվել է էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության ֆինանսական վերահսկողության նորմատիվների շրջանակ, որը հնարավորություն է ստեղծում լուծելու երկու խնդիր: Նախ, կրիպտոարժեքները ներառվում են ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ոլորտ և նրանց շրջանառությունը ենթարկվում է մոնիտորինգի սահմանված նորմատիվի թույլատրելիության զուգակցմամբ: Եվ երկրորդ, եթե վճարահաշվարկային կազմակերպությունների գծով ներկայիս կիրառվող նորմատիվները գործում են միկրո մակարդակով, ապա առաջարկվող կրիպտոլիզացիայի նորմատիվը սահմանվում է մակրոտնտեսական մակարդակի համար:

5. Առաջարկվել է էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեությունում ռիսկերի գնահատման նոր մոտեցումներ, որոնք հնարավորություն են տալիս.

Առաջին, իրականացնելու վճարահաշվարկային գործունեության ռիսկայնության բազմագործոնային վերլուծություն՝ հաշվի առնելով ոչ միայն ոլորտի ֆինանսատնտեսական, գործառնական, այլև կիբեռանվտանգային ու համակարգային ռիսկերը:

Երկրորդ, կիրառել ռիսկերի գնահատման ինչպես սինթետիկ, այնպես էլ ըստ առանձին գործոնային՝ անալիտիկ մոտեցումներ, որի դեպքում բացահայտվում են էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության վրա բացասաբար ազդող առավել ռիսկային գործառույթները:

Երրորդ, ներդնել ռիսկերի չափայնության միասնական համակարգ, բոլոր գործունների գծով կիրառելով շեղումների գործակիցներ, որով հնարավորություն է ընձեռնվում գնահատումների դեպքում համադրելի դարձնելու չափման տարբեր միավորներով հանդես եկող ռիսկային գործունները և կատարելու համեմատական վերլուծություններ ինչպես ժամանակային, այնպես էլ էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության ներուղորտային կտրվածքով:

6. Առաջարկվել է էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի գործունեության արդյունավետության հաշվետվողականության համակարգի բարելավման ուղի՝ շահառուների սպասումների բավարարվածության աստիճանի հիման վրա կազմվող վարկանիշային սանդղակների հենքով, որը հնարավորություն է տալիս.

առաջին, << կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվետվությունների տեղեկատվական հոսքերը ուղղել ոչ թե մեկ ուղղությամբ, այլև հետադարձ կապ հաստատել վճարահաշվարկային համակարգի շահառուների հետ՝ բարձրացնելով ոլորտի մոնիտորիգի արդյունավետության աստիճանը,

երկրորդ, հրատարակվող վարկանիշային սանդղակներով վերլուծել վճարահաշվարկային ծառայությունների մատուցման մրցակցային շուկան, շահառուներին ներկայացնելով ոլորտը սպասարկող ֆինանսական կազմակերպությունների մրցակցային դիրքերը,

երրորդ, հնարավորություն ստեղծել վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունը << կենտրոնական բանկի վերահսկողության ոլորտից տեղափոխելու նաև մոտիվացիոն դաշտ, քանի որ վարկանիշային սանդղակում ցածր դիրքեր զբաղեցնող ֆինանսական կազմակերպությունները կձգտեն հաջորդ տարին բարելավել դիրքերը՝ վերանայելով իրենց գործունեության ոչ մրցակցային ոլորտները:



**Հետազոտության առանցքային դրույթները հրատարակվել են  
ատենախոսի հետևյալ գիտական հոդվածներում.**

1. Դանիելյան Հ., Էլեկտրոնային վճարային համակարգերի պատմական ընթացքը, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 2020, 5 (10), էջ 133-142
2. Danielyan H., The issues of regulation electronic payment sevice, Finance and accounting, scientific journal, 2 (6), 2020 pp. 143-151
3. Դանիելյան Հ., Կրիպտոարժույթի ծագումնաբանությունը և զարգացման միտումները, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 2021, 5 (16), էջ 128-134
4. Danielyan H., Improving of crypto currency turnover financial management, Finance and accounting, scientific journal, 1 (7) 2021, pp. 116-125
5. Danielyan H., Financial risks management issues in electronic payment and settlement activities, Finance and accounting, scientific journal, 2 (8) 2021, pp. 117-124
6. Danielyan H., Financial literacy problems in cripto transactions, Finance and accounting, scientific journal, 1 (9) 2022, pp. 74-80

**ГРАЧЬЯ АРСЕНОВИЧ ДАНИЕЛЯН**

**ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО МЕНЕДЖМЕНТА ЭЛЕКТРОННЫХ  
ПЛАТЕЖНО-РАСЧЕТНЫХ СИСТЕМ И КРИПТОВАЛЮТ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 8 сентября 2022 г. в 14<sup>00</sup> часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

**РЕЗЮМЕ**

Финансовый менеджмент платежно-расчетных систем в настоящее время переходит на новый этап развития, зависящий от беспрецедентного расширения электронных транзакций и обращения криптовалют. В связи с этим разработка научных направлений по совершенствованию подходов к управлению финансами электронных платежных систем считается актуальной.

***Цель и задачи исследования***

Целью диссертации является внесение предложений по совершенствованию подходов финансового менеджмента электронной платежной системы.

Исходя из цели исследования были поставлены и решены следующие задачи:

- проанализировать мотивы расширения инструментария электронных платежей и тенденции развития не только на национальном, но и на международном уровне;
- внедрить подходы к совершенствованию финансового надзора и подотчетности платежно-расчетной системы, которые будут основаны на удовлетворении потребностей и ожиданий бенефициаров сектора;
- разработать подходы к управлению финансовыми рисками системы электронных платежей и расчетов, которые будут основаны на единой системе многофакторного измерения рисков;
- анализировать степень взаимодействия между процессами выпуска криптовалюты и электронных денег под централизованным контролем;
- представить предложения по улучшению определения денежной массы, которые будут учитывать децентрализованное обращение криптовалют.

### **Объект и предмет исследования.**

Объектом исследования выступила система электронных платежей и расчетов Республики Армения, а также рынок криптовалют в рамках их финансовых функций. Предмет исследования - процесс финансового управления электронной платежно-расчетной системой.

**Научная новизна исследования** - разработка предложений по совершенствованию управления электронной платежно-кредитной системой Республики Армения. В частности:

- разработаны подходы к управлению финансовыми рисками системы электронных платежей и расчетов с применением единой системы измерения факторов риска, комплексных индикаторов для оценки возможных потерь в рамках целей бенефициаров;

- были определены области взаимодействия децентрализованного обращения криптовалют и выявлены взаимодействия процессов эмиссии электронных денег под централизованным контролем государства, на основании которых были внесены предложения по улучшению определения денежной массы;

- на основе анализа обращения криптовалюты на финансовом рынке предложены подходы к управлению криптолизации экономики, расширяющие круг качественных показателей характеристики денежной массы, а также индикаторов эффективности обращения электронных денег,

- на основе оценки результатов деятельности электронных платежных и расчетных услуг предложена рейтинговая система деятельности электронных платежных и расчетных организаций, использующая в качестве мотивационного инструмента подотчетность платежно-расчетной деятельности.

**HRACHYA ARSEN DANIELYAN**

**ISSUES OF FINANCIAL MANAGEMENT OF ELECTRONIC PAYMENT  
SETTLEMENT SYSTEMS AND CRYPTOCURRENCIES**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place on 8 September 2022, at 14<sup>00</sup> o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

**ABSTRACT**

The financial management of payment and settlement systems is currently moving to a new stage of development, depending on the unprecedented expansion of electronic transactions and the circulation of cryptocurrencies. In this regard, the development of scientific directions for improving the financial management approaches of electronic payment systems is considered relevant.

***The Purpose and Objectives of the Research***

The purpose of the dissertation is to make suggestions for improving the financial management approaches of the electronic payment system.

Based on the purpose of the research, the following objectives were raised:

- analyze the motives for expanding the e-payment toolkit and development trends not only at the national, but also at the international level;
- introduce approaches to financial oversight and accountability improvement of the payment and settlement system, which will be built on the fulfillment of the needs and expectations of the beneficiaries of the sector;
- develop approaches to financial risk management of the electronic payment and settlement system, which will be based on a unified system of multi-factor risk measurement;
- analyze the extent of interaction between cryptocurrency and e-money issuance processes under centralized control;
- submit proposals for improvements in the determination of money supply, which will take into account the decentralized circulation of cryptocurrencies;
- propose approaches to controlling the cryptocurrency of the economy, taking into account acceptable indicators of cryptocurrencies in the money supply and ways of efficiency of electronic money circulation.

### ***Object and subject of research***

The object of the research in the study is the electronic payment and settlement system of the Republic of Armenia, as well as the cryptocurrency market within the framework of their financial functions. The subject of the research is the process of financial management of an electronic payment and settlement system.

### **The Main Research Results and Scientific Novelty of the Dissertation Thesis**

Scientific new research - representation of proposals for improving management of the electronic payment-credit-credit system of the Republic of Armenia. Particularly:

- developed approaches to managing financial risk systems of electronic payment systems and dissemination with the application of a single system of risk factor measurements, complex indicators for assessing possible pursuits of all benefits;
- there are certain areas of interdependence cryptocurrency and cryptocurrency interaction processes of electronic communications today under the centralized control of the government, on the basis of which they have been predominantly established in some cases.
- based on the analysis of the circulation of cryptocurrency in the financial market, approaches to managing the cryptolization of the economy are proposed, expanding the range of qualitative indicators of the characteristics of the money supply, as well as indicators of the efficiency of electronic money circulation,
- based on the evaluation of the results of electronic payment and settlement services, a rating system for the activity of electronic payment and settlement organizations was proposed, using the accountability of payment and settlement activities as a motivational tool.

